ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր., Կառավարական տուն 3

"01" 03 2017 թ. N 02/15/1182-16

«Հետաքննող լրագրողներ» հ/կ-ի նախագահ,
«Հետք» թերթի խմբագիր՝
Է. Բաղդասարյանին

Հարգելի պարոն Բաղդասարյան

ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարին ուղղված Ձեր հարցման առնչությամբ տեղեկացնում ենք, որ խնդիրը քննարկվել է Ազատություն TV-ի <<Ըստ էության>> հաղորդաշարի 09.02.2017թ-ի եթերում (http://www.azatutyun.am/a/28300417.html), որին մասնակցել են ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության, ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի, ՀՀ Արագածոտնի մարզպետարանի, ինչպես նաև գյուղի բնակիչների ներկայացուցիչները:

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության ունեցած տեղեկատվության համաձայն ՀՀ Արագածոտնի մարզի Թլիկ համայնքը դեռևս չի դիմել <<Վեոլիա ջուր>> ընկերությանը՝ ջրամատակարարման կազմակերպման հարցը ընկերության առաջիկա ծրագրերում ընդգրկելու համար, իսկ ՀՀ Արագածոտնի մարզպետարանի ներկայացուցչի նախաձեռնությամբ նախապատրաստվում է հանդիպում՝ հարցի լուծման հնարավոր ուղղությունները քննարկելու համար:

Հարգանքով՝

Մ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ

Կատարող՝ Ա. Սողոմոնյան
Տարածքային կառավարման վարչություն
Հեռ. (010) 511-334